

քէն աւելի ծախք ըլլալուն, պէտք եղաւ որ եօթը տարի գործքը դադարած մնայ: Ինկէ ետքը նորէն սկսան առաջ տանիլ մեծ քաջութեամբ ու զարմանալի ճարտարութեամբ. և հիմա գրեթէ բոլորովին լմնցած է, ու մարդիկ ոտքով ու կառքերով համարձակ կը քալեն մէջը:

Հիմա հոս դրած պատկերնիս բացատրենք.

Ա. Դաջին ձեւը թընէլին ընդհանուր տեսքն է՝ արեւմտեան կողմէն առնուած՝ ինչուան երկայնութեան կէսը. յատակին երկու կողմը սալայատակ ըրած է քիչ մը բարձր՝ ոտքով քալողներու համար. մէջտեղն ալ խիճ լեցուցած է կառքերուն համար: Իմէն մէկ կամարին վրայ ալ կազի կանթեղներ կան որ ցորեկուան պէս պայծառ լոյս կուտան մէջը:

Բ. Երկրորդ ձեւին մէջ կերեւնայ թաւի գետին փորուած յատակը՝ լայնքին բացուած, խորը հայթ ու լի փինկ աւաններուն մէջտեղը. աս յատակին լայնքը, և թընէլին երկայնութիւնը (որչափ որ էր աս պատկերին քաջուած ատենը) 750 ոտք է: Ղամբուն երկու ծայրը կերեւան երկու մեծ փոսերը, որ ասոնց մէջէն դարձար ճամբաներով թընէլին մէջ կը մտնուի:

Գ. Երրորդ ձեւը Վահան ըսուած մեքենան է, որուն մէջէն գործաւորները կաշխատին, ինչպէս որ ըսինք:

Դ. Չորրորդ ձեւին մէջ կը տեսնուի նոյն վահանին կողմնական կտորը, որով աւելի աղէկ կ'իմացուի թէ գործաւորները ինչպէս ապահով կեցած են մէջը:

Եւ ջի ձեւին կերպովը երկու բաժնուած է թընէլը քովէ քով. մէկը եկող կառքերուն, մէկալ գնացողներուն համար, որ իրարու արգելք չըլլան. երկուքին մէջտեղն ալ հաստատուն կամարներ կան, ու ան կամարներուն տակէն ճամբայ կայ որ ուղղը մէկ բաժանմունքէն մէկալը կրնայ անցնիլ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Խաշի Վայ:

ԽԱՂ խաղալը հասարակօրէն ուրախութենէ առաջ կուգայ. ուստի կը տեսնենք որ կենդանիները երբոր կուրախանան՝ կը սկսին խաղալ. վասն զի ուրախութիւնը անանկ կընէ որ կենդանական ոգիքը կը վառուին, և իբր թէ կուզեն դուրս ելլել, և ուրիշներուն հետ ալ ցնծալ. և աս աւելի անոնց կըլլայ, որ արիւննին յըստակ է, ինչպէս է տղայոց արիւնը. չափահասներու ալ կըլլայ՝ երբոր աւելի ուրախութիւն մը ունենան:

Երբեմն ասոր ներհակ՝ խաղը կըլլայ ուրախութեան պատճառ. ուստի կը տեսնենք որ տրտում մարդիկ խաղ խաղալով կուրախանան, կամ գոնէ խաղով տրտմութիւնին կը փարատեն: Պատճառն աս է որ ինչ և իցէ խաղ յաղթութեամբ կը վերջանայ. իսկ յաղթութիւնը ուրախութեան առիթ է:

Եւ պատճառիս համար մարդիկ իրեք կերպ խաղ հնարեցին. մէկը՝ խելքի ու խօսքի, ինչպէս է հաշիւներով՝ խաղը, հանելուքը, և այլ ասոնցնման խաղեր. երկրորդը գործքի, ինչպէս է գունտով խաղալը, պար բռնելը, և այլն. երրորդը խելքի և գործքի, ինչպէս է սատրինջ՝ խաղալը, նարտ, թուղթ, և այլն. ասոնց կարգն է ձեռնածոութիւնը՝ և պատմական խաղեր: Եւ ջինը բարակ մարդկանց կը վայլէ, և քիչ կը գործածուի. միջինը տղայոց և հաստ մարդկանց բանն է. վերջինը հասարակ է և մարդավայել:

Եւրդ ինչ և իցէ խաղ աղէկ կըլլայ,

1 Աս սիրուն, բնական, ու ազգու հատուածը մեր բարեյիշատակ հ. Միքայէլ Չամբեան վարդապետին գրուածքներէն առինք, որ նամակի ձևով շարադրեր է 1804ին, նոյեմբերի 20ին:

2 Հիւսիս:

3 Պիւնձէ:

4 Սաթրինջ:

5 Թավա:

6 Օգոստոս:

և գործ առաքինութեան կրօնականի, երբոր ուղիղ դիտաւորութեամբ ըլլայ, կամ հանգչելու համար, կամ տրտմութիւն փարատելու, կամ չարիք մը խափանելու, կամ բամբասանք գոցելու, կամ ատենը դատարկ չանցընելու, կամ ուրիշը ուրախ պահելու, և այլն, և աս՝ առանց մեղաց:

Եւստի անկարգ և գէշ կըլլայ չորս բանով. մէյմը՝ երբոր չափէն աւելի կըլլայ, ինչպէս կրնեն ոմանք առաւօտանց մինչև իրիկուն խաղալով, ան ալ՝ կիրակի օրեր. որ պէտք էր գոնէ քիչ մըն ալ աղօթքի հետ ըլլալ, բարի բաներու և բարի զրուցներու ըզբաղել: Երբոր անկարգ կըլլայ խաղը, երբոր չարաչար տաքնալով կըլլայ, կամ վրէժ՝ առնելով. վասն զի ան ատենը զբօսանք չըլլար, այլ տանջանք: Երբոր անկարգ կըլլայ խաղը, երբոր կռուելով կըլլայ, կամ ըսեմ խարդախութիւն ընելով. վասն զի ան խաղ չէ, այլ կռիւ. որով ուրիշի ալ իրեն ալ տրտմութեալատճառ կըլլայ: Երբոր անկարգ կըլլայ խաղը, երբոր ստակ վաստակելու համար է. և աս սատանայի հնարք է, որ առանց ստրկի անհամ կերեցընէ խաղը, կուզէ ստրկով համ տալ. ինչպէս խաղցողներն ալ կրսեն թէ առանց ստրկի խաղը առանց աղի ու պղպեղի կերակուր է. իրենք ալ յայտնի կրտեսներն որ չէ թէ աղ է, այլ թոյն². չէ թէ համեմ³ է, այլ լեղիցընող և համը տանող: Երբեք թէ աղ է. սակայն աղը շատ ըլլայ նէ՝ կերակուրը անուտեղի կըլլայ. համեմը շատ դնես, բերանդ կայրի, սիրտդ կըճըլմուի: Եւ անց ստրկի խաղը, և ըստրկով խաղը մէկմէկու բաղդատես նէ, մէկը զբօսանք կըգտնես, մէկալը մեղադրանք, ու նաև տանջանք: Եւ թէ կուզես աղէկ իմանալ աս զանազանութիւնս, երբոր մէկ քանի հոգի ստրկով խաղ խաղան՝ նստէ քովեր-

նին, մէյմը նայէ ինչ կրնեն. զբօսանք է ըրածնին թէ տանջանք:

Եւստի կորսընցընողին սիրտը տակն ու վրայ, արիւնը պղտորած, երեսը ուռած, դէմքը կընճռած, քիթը կախած, բերանը բռնուած, աչուքները դարձած: Եւ արկուցիւնը առեր է զինքը, ոսկորները կըկոտորտէ, չուզէր ալ զինքը բարկացած երեցընել. դրսէն երեսանց կատակ կրնէ՝. բայց պակուսները դողալով, երբեմն ալ հեքը կտրտելով: Քիչ մը ձախորդ երթայ բանը նէ, կրսկսի խաղին ա. նէճք տալ, և բերնէն գէշ գէշ խօսքեր հանել: Եւ կը քովէն հետը խնայ նէ, կրսկսի կատղիլ, ու ծուռ ծուռ երեսը նայիլ. մէկն ալ խաղալու կերպին պակսութիւն դնէ, կամ ծուռութիւնը բռնէ նէ, վեր կընետուի, ասանկ էր՝ անանկ չէր ըսելով, երդում ալ կրնէ յանուս՝ Եւտուծոյ և իր կենացը վրայ: Եւ որ քիչ մը աւելի ձախորդ երթայ բանը, կրսկսի պոռալով խօսիլ, ու կանչուրուտելով հայհոյել, բարեկամին սիրտը կոտրել, և ուրիշներուն աչքին փուշ ըլլալ:

Ոմանք կըյորդորեն. բաւական է՝ ել կրսեն. չեւեր: Եւստի ստակ չմնաց. Եւստի սա խաղը. մտիկ չընէր: Եւստի խօսիս նէ՝ անարգանք կըլսես, և չվայելու բան: Եւստի ատեն կուգայ. հրամէ կրսեն. տեղէն չեւեր: Եւստի (քիչ մէկալ խաղցողը) կուզէ ելլել, չթողուր. երդում տալ կուտայ որ նստի: Եւստի քովէ կըսէ, հոգը չէ. Եւստի սպասեն կրսէ: Եւստի կուրդ պաղեցաւ, աչքին բան չեւերնար. ախորժակը՝ փախեր է, խեւքը գլխէն գացեր է: Եւստի՝ ունի, միտքն ալ չեւեր:

Եւստի իրիկունէ կրսկսի, քանի խաղայ՝ կըտաքնայ. գիշերը կըկոխէ, չարժիր. կէս գիշեր եղաւ, չիմանար. բան կըփրճանայ, որո՞ւ կրսես: Եւստի ծառայքը կեցեր են ձանձրա-

1 Էօճ:

2 Զէկ:

3 Պահար:

1 Եւստի:

2 Զէկ:

3 Իշտակ:

4 Սիւսափի:

ցած . անէծք կուտան խաղին ալ՝
խաղցողին ալ, հնարողին ալ՝ հետեո-
ղին ալ : Իսկ խաղցողը գրեթէ մարդ-
կութենէ ելած , տապկած տագնա-
պած , երբեմն ալ կաս կապուտ եղած
ու դե դարձած : Դժոխային տեսիլ :

Ինչ կընես եղբայր . ինչո՞ւ կըխա-
ղաս . զբօսանքի համար . վայ ատանկ
զբօսանքին : Եւ թէ ինչ խեղճու-
թեան մէջ ես ընկեր . տես թէ ինչ-
պէս կըմեղադրեն զքեզ ընկերներդ :
Եւ ինչ ես եղեր ամէնուն առջևը . կի-
մանաս ու չես իմանար :

Եւ ինչ որ կելլես , ինչ կըզգաս .
ինչ ես շահեր . քսակդ՝ նայէ , քեզի
ալ նայէ . քսակդ պարպած , կեանքդ
փճացած , դու խահրած , արիւնդ
պղտորած . միտքդ շփոթած , ու հո-
գիդ սեցած . սիրտդ ալէկոծ , մար-
մինդ տակնուվրայ եղած : Եւ թէ
չես կարող ընելու . խեղճ խաղին
ձախորդ երթալուն վրայ է : Եւ ըս-
տակն որ հարկաւոր բանի պիտի տայ-
իր՝ խաղին գնաց , և անոր մտմտու-
քը քովդ մնաց :

Պաշտօն կերթաս . ու չմնացեր ես
նէ՝ ասոր անոր ձայն կուտաս , ասոր
անոր անհանգստութիւն : Եւ պառ-
կիս , քունդ չտանիր . կըտապըլտը-
կիս , կըտանջուիս : Եւ աւօտը գինովի
պէս ելլելով՝ զուրկ՝ կըմնաս շատ
բանէ . երբեմն ալ ուշ կելլես , ու չես
հասնիր քու պիտանաւոր գործքե-
րուդ . չես հասնիր ժամուն , չես հաս-
նիր երբեմն նաև սուրբ պատարագի :

Եւ անկ խաղ խաղցողը թէ որ որ-
դիք ունի , անոնց հոգեւոր մահուա-
նը պատճառ կըլլայ , և անոնց գէշ
ըլլալուն առաջնորդ կորստեան : Ինչ
օրինակ կամ ինչ խրատ պիտի առնու
որդին այսպիսի հօրէ :

Չըսես թէ միշտ ասանկ չըլլար :—
Հապա միշտ պիտի ըլլար . միշտ չըլ-
լար նէ , շատ անգամ կըլլայ . մէկ ան-
գամ ալ հերիք է . դու ոչ մէկէն կը-
զգաստանաս , և ոչ շատէն : Եւ լացի

մարդուն մէկ փորձը հերիք է :

Թէ որ խաղցողը չկորսնցընէ , այլ
վաստրկի , նոյնպէս իրեն յանցանք է
ու փնաս : Եւ անցանք է , վասն զի բա-
ւական է որ կորսնցընողին անկար-
գութեանը և նեղութեանը , ևս և մե-
ղացը պատճառ ըլլալով՝ անոր մեղ-
սակից կըլլայ : Եւ նա ալ է , երբեմն
ներքին , երբեմն ալ արտաքին : Եւ եր-
բին , վասն զի կըլլայ որ առողջու-
թեանն ալ դէմ ըլլայ . հազի տէր է ,
տնէ տուն երթալով գիշեր ատեն՝
հազը կըկտոցնէ : Հիւանդութի
նոր է ելեր . գիշերով ուրիշի տուն
երթալով գալով ինչ կըլլայ : Եւ տա-
քին ալ ըսի . վասն զի երբեմն կըլլայ
որ խաղի ատեն փորձանք մը կըպատա-
հի տանը մէջ , կամ տնէն դուրս . ի-
րեն իմաց կուտան , խաղը չթողուր .
հիմա կուգամ կըսէ , կուշացընէ ,
մինչև որ փորձանքը կըմեծնայ . ինչ-
պէս որ մէկ քանին աչօք տեսանք :
Հիմա տես թէ աս բան շահիլ է
կամ ստակ վաստրկիլ թէ փնաս :

Սակայն այսպիսիները խաղին չեն
դներ յանցանքը՝ , այլ ուրիշ բանի .
ասոր համար չեն զգուշանար . խրատ
ալ տաս՝ մտիկ չեն ըներ : Եւ անց յոր-
դորանք պէտք չէ , այլ արհամար-
հանք . մինչև որ իրենց պատիժը ի-
րենց ձեռք գտնեն , և փնասին աչ-
քերնին մտնէ : Թէ որ ասոնց ըսես ,
մեղք չէ՞ ստրկին , ինչ կայ կըսեն . մէկ
օր մը կըկորսնցընեմ , մէկ օր մը կը-
վաստրկիմ . օր մը կերթայ , օր մը
կուգայ : Եւ անկ չէ . գնացածը գը-
նաց , եկածը շահ չունի , վասն զի ա-
նիծած է . և բաղդով վաստրկած ըլ-
լալով՝ փուռ տեղը կըհալի կերթայ :
Եւ անց ըսես թէ ստրկով չխաղաք նէ
չըլլար . չենք կարող կըսեն , կըձանձ-
րանանք . ստակը յօժարութեամբ ու
սիրով կըխաղցընէ : Եւ անի թէ դու
առանց յօժարութեան խաղայիր ,
վասն զի քիչ կըխաղայիր , և քու պա-
տուական ատենդ չիիր փճացընէր ,

և ան պատուական ժամանակներուդ պարտական չէիր ըլլար, ու կեանքդ չէիր մաշէր:

Նայէ թէ այսպիսիքս ինչ պատասխան կուտան. «Մտեննիս պարապ մնայ նէ՝ բամբասանքով՝ ու մեղքով պիտի անցընենք. ստրկի ու ժով առանց մեղաց կըմնանք», Նըհասկընա՛ս, ինչ տղայական խօսք է: Ուրիշները կըտեսնենք որ ստրկով չեն խաղար. ոմանք ալ ամենեւին չեն խաղար, ու բամբասանք չեն ընէր. դու ինչպէս մարդ ես որ չխաղաս նէ՝ բամբասանքի և մեղաց գիրկ կըզարնես: Եւ թողունք. դու որ ստրկով կըխաղաս, միթէ առանց մեղաց կանցընես խաղի ատենդ: Բամբասանք ալ կընես, հայհոյանք ալ կըսես, նախատինք ալ կուտաս ընկերիդ. թող գայ թակղու թիւնը, որով կըգայ թակղեցընես ուրիշները, մանաւանդ գրացիները և քու բոլոր տանդ մարդիկը:

Նսոնցմէ ոմանք ալ կան որ խրատենէ, կըսեն. «Նս չեմ ուզեր ստրկով խաղալ, բայց ինչ ընեմ, բարեկամներս չեն թողուր», Նշխարհիս վրայ մարդ չմնաց բարեկամ ունենալու, որ գացեր խաղասէրներու՝ հետ բարեկամ ես եղեր. անոնք բարեկամ չեն, այլ թշնամիանդգամ: Եւ նենք թէ անոնք ասանկ են. դուն քու բարիդ նայէ. ինչո՞ւ անոնց պէս կըլլաս. ինչո՞ւ անոնց մօտիկ կընես. դուն քու պատիւդ և անունդ պահէ, անոնց խօսքին ինչ մօտիկ կընես. դուն քու տունդ ու զաւակներդ հոգա, անդգամ մարդկանց հետ ինչ բան ունիս:

Շատ բան կայ ըսելու, սակայն ասանկ մարդկանց չեն աղդեր բանք, այլ գանք. ես այսչափ միայն կըսեմ. վայ ան տանը, ուր ստրկով խաղ կըխաղցուի. վայ և ան տանտիրոջը, որ աս ամէն բանը կըլսէ ու գիտէ, և ամենեւին հոգ չընէր. մանաւանդ թէ ուրիշներն ալ կըհրաւիրէ որ գան ա-

սանկ խաղ խաղան իր տանը մէջ: Հերիք չէ որ ինքը անէծքի ճամբան է, կուզէ որ ուրիշներն ալ անէծքի ստակ իյնան: Այն ասոնց ընտանեացը. վասն զի տանտէրը զիրենք չնայիր, այլ իր խաղը կընայի: Բան մը կուզեն՝ չընէր, ստակ կերթայ ըսելով. ու ինքը խաղին կուտայ ստակը: Հարկաւոր խօսք մը կըսեն, մօտիկ չընէր, հիմա խաղի պիտի երթամ ըսելով: Այն դարձեալ ասոնց ընտանեացը. գիշեր ցորեկ ախ ու վախ կընեն: Մէկուն ընտանիքը մէկալին ընտանեացը հետ կըխուովին, երբեմն կուի ալ կընեն. մէկը՝ քու էրիկդ է կըսէ ընողը. մէկալը՝ թէ քուկն է:

Այն և ան քահանային որ այսպիսի տան խոստովանահայր է. թէ որ ետեւ չիյնայ ճար ընելու, պարտական կըլլայ առաջի Նստուծոյ. թէ որ ետեւ չիյնայ ու ճար չըլլայ, ետքի ճարը թողուն է. վասն զի Նստուած ալ թողեր է և կըթողու այնպիսի տունը: Ո՞վ որ մօտիկ ընէ գրածներս ու պահէ, Նստուած ալ իրեն մօտիկ ընէ և պահէ:

Նորոտնք:

ՄԱՐԴՈՒՍ աչքէն վազած պայծառ՝ անհոտ ու աղի ջուրը ցամքեցընելով քններ են, ու գտեր են մէջը պարզ ջրէն զատ՝ ծովային աղի մասունք, ծծմբային մօխիր, կրային նիւթ ու լատիներէն մոտաւ ըսուած խժային նիւթը: Նրցունքին աղբիւրը կամ ամանը՝ մարդուս աչուընէրուն երկու անկիւնը մէյմէկ կունտ է՝ ցանցատեսակին հետ միացած, վերի արտեանանց տակը. անոնցմէ բարակ խողովակներ տարածուած են ինչուան թարթիչներուն՝ արմատը՝ արտեանանց մէջ. ան անկիւնները երկու բերաններ ալ կան դէպ ի քիթը. անոր